

## ՍԴՅԿ-ի Յայտարարութիւնը Հայոց Ցեղասպանութեան 105-Ամեակի Առիթով

Այսօր, համայն մարդկութեան համար դժուարին պայմաններու ներքոյ կ'ոգեկոչենք Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակը եւ հաւանակ այն հանգամանքին, որ ոգեկոչման հրապարակային ձեռնարկներն ու քայլարշաւները փոխարինուած են առջանցային ու խորհրդանշական միջոցառումներով, մենք կը շարունակենք մնալ հաստատական մեր իրաւունքներու հետապնդման ու արդարութեան վերականգնման պայքարին մէջ:

Միւս կողմէ, թուրքիոյ կառավարութիւնը կը շարունակէ իր ժխտողական քաղաքականութիւնը և կը մերժէ առեւտուիլ իր պատմութեան սեւ էջերուն հետ: Սակայն, ի հեճուկս թուրքիոյ իշխանութիւններուն, Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը կը շարունակէ գրանցել նորանոր յաջողութիւններ, յատկապէս անցեալ տարի ԱՄՆ Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան կողմէ Ցեղասպանութեան ճանաչումը վերահաստատող գոյգ բանաձեւերու ընդունումով, հակառակ թրքական բացայայտ սպառնալիքներուն եւ ճնշումներուն:

Այս առիթով, մենք վերստին կ'ուզենք գնահատանքի եւ երախտագիտութեան խօսք յղել ԱՄՆ Գոնկրէսի անդամներուն եւ թուրքիոյ այն խիզախ մտաւորականներուն, որոնք կը շարունակեն պայքարիլ յանուն ճշմարտութեան: Նաև, անգամ մը եւս կոչ կ'ուղղենք թրքական կառավարութեան վերջապէս ընդունիլ Ցեղասպանութեան փաստը եւ այդպիսով դուռը բանալ Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ բաց երկխօսութեան:

Այս օրերուն, երբ ամբողջ աշխարհը կը պայքարի համաճարակի դէմ, մենք գոհունակութեամբ ակնարկենք կ'ըլլանք հայ ժողովուրդի միասնականութեան ու մարդասիրական ոգիի դրսեւորման, երբ զանազան հայափոփ զաղութները ներս կը նախաձեռնուին նպաստաբաշխումներ եւ այլ օգնութիւններ համաճարակի հետեւանքով կարիքաւոր դարձած ընտանիքներուն եւ անհատներուն:

Վստահ ենք, որ Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին միասնական ջանքերով պիտի կարողանանք յաղթահարել այս դժուարին հանգրուանը և գալիք տարիներուն վերանորոգուած եռանդով ու բազմաազար շարքերով պիտի շարունակենք բարձրացնել մեր բողոքի ձայնը յանուն արդարութեան ու հայ ժողովուրդի իրաւունքներու վերականգնման:

Կը յիշենք եւ կը պահանջենք:  
Ս.Դ.Հ.Կ Կեդրոնական  
Վարչութիւն

## Այլընտրանքային Միջոցառումներով Նշուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 105-Ամեակը

«Քորոնա» ժահրի համաճարակ պայմաններուն տակ, Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակը հրապարակային այլ միջոցառումները ստիպողաբար այս տարի առկախուեցան եւ փոխարինուեցան այլընտրանքային նախաձեռնութիւններով՝ Հայաստանի եւ սփիւռքի տարածքին:

Երեւանի մէջ, Ապրիլ 23-ի երեկոյեան ժամը 21:00-ին մարտնչական բնակարաններու լոյսերը եւ եկեղեցիներու զանգերու ներքեւ պատուհաններէն մոմի ճրագով, հեռախօսի լամպերով մարդիկ քանի մը ըրոպէով միացան լուսավառ ոգեկոչման միջոցառման:

Ապրիլ 24-ին, 1915 կարճ համարին անուն ազգանուն ուղարկելով, հնարաւոր եղաւ մասնակցիլ ժամը 22:00-ին սկսած խորհրդանշական երթին: Մինչեւ լուսաբաց աւելի քան մակ միլիոն մասնակիցներու անունները արտապատկերուեցան Միջին Արեւելի Յուշահամալիրի սիւներուն վրայ:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան այս առթիւ ժողովուրդի ուղղուած իր պատգամին մէջ մասնաւորապէս ըստ, որ Ապրիլ 24-ը ոչ միայն Ցեղասպանութեան անմեղ զոհերու խնկարկման, այլ նաեւ



մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն լանցագործութեան օր է:

«Այսօր մեր ժողովուրդի գաւակներն աշխարհի բոլոր անկիւններում ոգեկոչում են Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերին: Ինչո՞ւ մէկ դար անց չեն մարում մեր զգացմունքները, իսկ մեր սրտերում էլ քան Վառչի վառ է այրուում յիշատակի ճրագը: Պատասխանը պարզ է: Անցել է մէկ դարից աւելի, սակայն չեն վերացուած ցեղասպանութեան հետեւանքները: Առ այս

## «Հայաստանի Պետութեանը Եւ Ժողովուրդին Թախանուածը Կոպեկ Առ Կոպեկ Պէտք Ե Վերադարձուի».

### Վարչապետի Խօսնակ

Գազիկ խաչատրեանի ընտանիքը, ի պատասխան ՀՀ վարչապետի այն ելոյթներուն, թէ կաշառակեր պաշտօնատար անձիք, անոնց կարգին՝ Պետական Եկամուտներու Կոմիտէի նախկին նախագահ՝ Գազիկ խաչատրեանի եւ անոր ընտանիքի կողմէ Հայաստանի պետութեանը եւ ժողովուրդին թախանուածը կոպեկ առ կոպեկ պէտք է վերադարձուի, հայաստանեան տարբեր պաշտօնեաներու հետ իրենց նախաձեռնութեամբ ունեցած շփուումներու ընթացքին, պատրաստակամութիւն յայտնած են վերադարձնել իրենց թախանածը եւ վերականգնել պետութեան պատճառուած վնասը: Այս մասին նշուած է ՀՀ վարչապետի խօսնակ՝ Մանէ Գէորգեանի տարածած յայտարարութեան մէջ:

ՀՀ կառավարութեան ունեցած տուեալներով, Գազիկ խաչատրեանը եւ իր որդիները ղեկավարած են Հայաստանի մէջ երկար տարիներ գործած բոռուփցիոն եւ մաֆիոզ համակարգ, որու հետեւանքով կուտակած են քանի մը հարիւր միլիոն տոլարի ապօրինի հարստութիւն: Վարչապետի դիրքորոշումն այն է, որ այդ թախանուածը պէտք է մինչեւ վերջ վերադարձուի պետութեան:



ՀՀ վարչապետի Խօսնակ՝ Մանէ Գէորգեան

Ինչ կը վերաբերի UCOM ընկերութեան, անոր բաժնեմասերու օտարումը Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեամբ, հնարաւոր է միայն ՀՀ կառավարութեան համաձայնութեամբ: Երբ ընկերութեան բաժնետէրերուն միջեւ վէճ ծագած է, եւ բաժնետէրերու կազմի փոփոխութեան հարց, կառավարութեան դիրքորոշումը եղած է այն, որ խաչատրեաններու բաժնեմասի վաճառքը հնարաւոր կ'ըլլայ միայն այն պարագային, եթէ

այս թուրքիան կատարուածի համար որեւէ զղջում չի յայտնել, ներողութիւն չի հայցել: Դա է պատճառը, որ մենք այսօր յայտարարում ենք՝ չիշում ենք եւ պահանջում», ըստ վարչապետը:

Ապրիլ 24-ի առաւօտեան ժամը 10-ին սկսեալ, հերթաբար Միջին Արեւելի Յուշահամալիրի վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ տիկինը, նախագահ Արմէն Սարգսեան, Ազգային ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեան իր տիկնոջ հետ, Լեռնային Ղարաբաղի նորընտիր նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան ու Ամենայն Հայոց կաթողիկոսը, ընկերակցութեամբ հոգեւորական դասի:

Խոնարհումի արարողութեան կ'ուղեկցէր դաշնակահար Հայկ Մելիքեանի կենդանի կատարումը:

Յարգանքի տուրքը գեղարուեստական ծրագրով շարունակուեցաւ մինչեւ ժամը 22:00-ը: Մինչեւ լուսաբաց հնչեց դասական եւ ժողովրդական ստեղծագործութիւններ:

Լոս Անճելըսի մէջ 105-ամեակը նշուեցաւ առջանց միջոցառումով, որու ընթացքին իրենց խօսքը ուղղեցին ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Պալպուրիթեան, եկեղեցական համալսարանի առաջնորդներ, ազգային կուսակցութիւններու ներկայացուցիչները եւ համայնքային բազմաթիւ կազմակերպութիւններու պատասխանատուներ:

1,5 միլիոն Ամերիկացիներու ճաշ մատակարարելու համար առցայց դրամահաւաքը եւս պսակուեցաւ մեծ յաջողութեամբ: Նախատեսուած 150 հազար տոլար փոխարէն հանգանակուեցաւ աւելի քան 250 հազար տոլար, որ կրկնապատկուեցաւ անանուն բարերարի մը կողմէ եւ այդպիսով կարելի դարձաւ հասնիլ 5 միլիոն Ամերիկացիներու:

Միւս կողմէ, Ապրիլ 24-ին, ՀԿԲՄ-ի փաստօրինայի կեդրոնէն ներս տեղի ունեցաւ արիւնարշաւ, գործակցութեամբ Ամերիկայի կարմիր խաչի կազմակերպութեան:







### Նախագահ Տոնալտ Թրամփի Մերժեց Ղեկավարելու Գոնկրեսի Օրինակին

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնալտ Թրամփի Ապրիլ 24-ի տարեկան յայտարարութեան մէջ դարձեալ չօգտագործեց Հայկական ցեղասպանութիւն եզրը:

Անցեալ Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն Գոնկրեսի երկու պալատները՝ Ներկայացուցիչներու Տունը եւ Մերակոյտը յաջորդաբար ճանչցած էին ու վերահաստատած՝ Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը:

Հակառակ բազմաթիւ գոնկրէսականներու կոչերուն, Սպիտակ Տան կողմէ տարածուած յայտարարութիւնը մեծ մասով կրկնութիւն էր նախորդ տարիներու նախագահական խօսքերուն:

Ստորեւ՝ նախագահ Թրամփի յայտարարութիւնը:

«Այսօր մենք կը միանանք համաշխարհային հանրութեան, յիշելու 20-րդ դարու ամենասարսափելի զանգուածային վայրագութիւններէն մէկու՝ Մեծ եղեռնի գոհերը: Սկսեալ 1915-էն, Օսմանեան կայսրութեան գոյութեան վերջին տարիներուն, մէկուկէս միլիոն հայեր տեղահանուեցան, կոտորուեցան կամ մահուան երթի դատապարտուեցան: Յիշատակի այս օրը, մենք յարգանքի տուրք կը մատուցենք անոնց, որոնք կորսնցուցին իրենց կեանքը, միեւնոյն ժամանակ կը վերահաստատենք մեր յանձնառութիւնը ամբապնդելու աւելի մարդասէր ու խաղաղ աշխարհ:»

Ամէն տարի, Ապրիլ 24-ին, մենք կ'անդրադառնանք Ամերիկայի ու հայ ժողովուրդի ուժեղ եւ ամրացող կապին: Մենք հպարտ ենք, 1915 թուականի Հայկական եւ սուրիական օգնութիւն մատուցող ամերիկեան կոմիտէի հիմնադիրներու հակայական ջանքերով, որոնք որոշիչ մարդասիրական օժանդակութիւն տրամադրեցին հայ փախս-



Նախագահ Տոնալտ Թրամփ

տականներուն, եւ շնորհակալ ենք հազարաւոր ամերիկացիներուն, որոնք օժանդակեցին եւ կամաւորաբար օգնելու իրենց տուներէն տեղահանուած հայերուն:

Այս օրը ողբերգութեան լուսիններքեւ, մենք ակնատես կ'ըլլանք նաեւ հայ ժողովուրդի ուժին ու ամբողջութեան: Երջանիկ ենք, որ շատ հայեր իրենց հարուստ մշակոյթը բերին մեր ափերը եւ այդքան մեծ ներդրում ունեցան մեր երկրի կեանքին մէջ, ըլլալով գիտնորներ, նշանաւոր արուեստագէտներ, անուանի ճարտարապետներ եւ յաջողակ գործարարներ:

Մենք կ'ողջունենք հայերուն եւ թուրքերուն ջանքերը, ճանաչելու եւ հաշուի նստելու իրենց ցաւալի պատմութեան հետ: Այսօր մենք կը հաւատանք, որ այդ մեր պարտականութիւնն է յիշել անոնց, որոնք տառապած են ու զոհուած, եւ կը վերահաստատենք մեր նուիրուածութիւնը, աշխարհի կրօնական եւ ցեղային փոքրամասնութիւններուն պաշտպանութեան գործին»:

### Նախագահ Մաքրոն. Հայերը Կրնան Յոյս Դնել Ֆրանսայի Բարեկամութեան Վրայ

«Ապրիլ 24-ին Ֆրանսան կը յիշէ Կոստանդնուպոլսոյ 600 հազ մտաւորականներու սպանդը, որ սկիզբ դրաւ ցեղասպանութեան: Այսօր Ֆրանսան առաւել քան երբեք է յանձնառու է պաշտպանելու գոհերը յիշատակը, պայքարելու ժխտողականութեան դէմ եւ լուրջ դաս քաղելու պատմութեան այդ ողբերգական էջէն», - Հայոց ցեղասպանութեան 105-ամեակի կապակցութեամբ Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանին յղած նամակին մէջ գրած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն:

Ֆրանսան պաշտօնապէս ճանաչած է Հայոց ցեղասպանութիւնը, անցեալ տարի ալ էլիզեան պալատի ղեկավարը ապրիլ 24-ը հռչակած է Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր:

«Խստորէն չարգելով ներկայ առողջապահական վիճակի թելադրած հրահանգները, ես որոշած եմ, որ այս տարի նոյնպէս այդ օրը նշուի Փարիզ, սեղմ արարողութեամբ, Ֆրանսայի կառավարութեան անդամներուն ներկայութեամբ», - նաեւ ըստուած է Մաքրոնի նամակին մէջ:

Ֆրանսայի նախագահը վերահաստատած է նախապէս իր ըրած յայտարարութիւնը՝ հայերը կրնան յոյս դնել Ֆրանսայի բարեկամութեան վրայ: «Հաւատարիմ իր յանձնառութիւններուն՝ Ֆրանսան հայերու կողքին է խաղաղութեան եւ բարգաւաճման հասնելու անոնց իղձերուն մէջ», - Էմանուէլ Մաքրոն:

Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Ժոնաթան Լաքոթը Ֆէյսպուքի գրառմամբ յայտնած է Արմէն Սարգսեանին, Էմանուէլ Մաքրոնին, ինչպէս նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանին Ֆրանսայի վարչապետ էտուար Ֆիլիպի յղած նամակներու մասին, հրապար-



Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն

րակելով անոնց լուսապատճենները: «Սոյն թուականի ապրիլ 24-ին Ֆրանսան պիտի յիշատակէ 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան 105-րդ տարելիցը: Ներկայիս մեզի պատուհասած համավարակի առողջապահական ճգնաժամը ի գործը չէր մեր կողմէն մոռացութեան մատնել այդ կարեւոր պայքարը՝ յանուն արդարութեան եւ պատմական ճշմարտութեան: Ընդհակառակը, ան մեզի կը կոչէ այն համերաշխութեան, որ միշտ եղած է մեր երկու երկիրներու յարաբերութիւններու հիմքը», - Փաշինեանին գրած է Ֆիլիպի:

«Մէկ անգամ եւս կը ցանկամ Ֆրանսայի ձայնը միաւորել անոնց, որոնք անխոնջ կը պահանջեն, որպէսզի բոլորի կողմէ ճանաչուի ամբողջ ժողովուրդի մը կոտորածը: Ինչպէս Անաթոլ Ֆրանս այս առիթով արտայայտուած է. «Նահատակներուն հոսած արիւնը ապարդիւն չէ, մի ուժ ձեզի հետ է՝ ցրուած, սակայն հօր», - կը շեշտէ Ֆրանսայի վարչապետը:

### Կարօ Փայլան Թուրքիոյ Սեճիսէն Ցեղասպանութեան Հարցի Քննարկում Կը Պահանջէ

Թուրքիոյ խորհրդարանի «Ժողովուրդներու ժողովրդավարական» կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլան առաջարկած է Հայոց ցեղասպանութեան հարցը ուսումնասիրութեան առարկայ դարձնել թրքական մեծ լիսիններս:

Խորհրդարանի նախագահութեան ներկայացուած առաջարկով՝ ան պահանջած է «քննել 1915 թուականին հայ ժողովուրդի վերապրած Մեծ եղեռնը, բացայայտել պատասխանատուներն եւ կազմակերպիչները, առերեսուիլ անցեալին հետ եւ վերականգնել ուշացած արդարութիւնը»:

«1915 թուականի Ապրիլ 24-ին, 250 հազ քաղաքական գործիչ, մտաւորական, լրագրողներ ձերբակալուեցան եւ քշուելով դէպի Չանքըրը ու Այաշ, սպանուեցան: Այդ օրը ողջ աշխարհի մէջ ընդունուած է որպէս Օսմանեան կայսրութեան հայերու զանգուածային ոչնչացման պատճառ դարձած Հայոց ցեղասպանութեան սկիզբ», - ըստուած է հայցադիմումին մէջ:

Փայլան շեշտած է, որ հայ ժողովուրդի վերապրած ողբերգութիւնը բազմաթիւ երկիրներու խորհրդարաններու օրակարգերուն



Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան

վրայ եղած է եւ ճանաչուած իբրեւ ցեղասպանութիւն:

Հայագրի պատգամաւորը համոզուած է, որ արդարութեան հաստատման միակ տեղը Թուրքիոյ մեծ լիսինն է:

Փայլան այսօր իր թուիթթրեան էջին վրայ նաեւ գրած է. «Յարգանքով կ'ոգեկոչեմ Հայոց ցեղասպանութեան գոհերը: Հայ ժողովուրդը 105 տարի է արդարութիւն կը սպասէ»:

### Վարչապետ Նիկոլ Փաշինեան Հեռախօսազրոյց Ունեցած է Իրանի Նախագահ Հասան Ռուհանիի հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Իրանի իսլամական Հանրապետութեան նախագահ Հասան Ռուհանիի հետ:

Նիկոլ Փաշինեան զրոյցի սկզբնաւորութեան իրանի նախագահին եւ ողջ ժողովուրդին շնորհակարած է Ռամսանի սուրբ տօնի կապակցութեամբ:

Զրուցակիցները տեղեկատուութիւն փոխանակած են «Քորոնա» ժահրի համաճարակի վերաբերեալ իրենց երկիրները տիրող իրավիճակին եւ անոր դէմ պայքարի առումով ձեռնարկուող քայլերուն մասին: Անոնք երկուստեք ցաւակցութիւն յայտնած են համաճարակի պատճառով մահացածներուն համար: Նշուած է մարդկութեան պատուհասած այս վտանգին դիմակայելու համար միջազգային հանրութեան միասնական ջանքերու գործադրման եւ երկկողմանի համագործակցութեան կարեւորութիւնը:

Կողմերը գոհունակութիւն յայտնած են, որ չնայած հարորդակցութեան ոլորտի ժամանակա-



ւոր սահմանափակումներուն, երկու երկիրները կը շարունակեն առեւտրատնտեսական համագործակցութիւնը: Երկուստեք կարեւորած է այդ ուղղութեամբ հետագայ քայլեր ձեռնարկելը:

Նիկոլ Փաշինեան եւ Հասան Ռուհանին, մասնաւորապէս, ընդգծած են առեւտրատնտեսական համագործակցութեան նախաձեռնած մասին ծաւալներու վերականգնման նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկելու պատրաստակամութիւնը, պահպանելով ստեղծուած իրավիճակին պարտադրած սահմանափակումները:

# Թուրքիոյ Նախագահը Ապրիլ 24-ի Առթիւ Ցաւակցական Նամակ Ուղարկած է Պոլսոյ Հայոց Պատրիարքին, Մինչ իր Խօսնակը Պաշտպանած է Անբարայի Ժխտողական Թէզերը



Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյէպ Էրտողան «ցաւակցական ուղերձ» յղած է Պոլսոյ հայոց նորընտիր պատրիարք, Արք. Սահակ Մաշալեանին Ապրիլ 24-ի առթիւ:

Նամակին մէջ Թուրքիոյ նախագահը նշած է, որ կը յարգէ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներուն ծանր պայմաններու մէջ մահացած օսմանեան հայերու յիշատակը եւ ցաւակցութիւններ կը փոխանցէ անոնց թուներուն: Ան միեւնոյն ժամանակ շեշտած է, որ այդ ծանր ժամանակներուն մահացած բոլոր օսմանեան քաղաքացիներու հոգիներուն հանգստութիւն կը մաղթէ:

Նշենք, որ Էրտողանը նմանատիպ տեքստով արդէն քանի մը տարի կը դիմէ Թուրքիոյ հայերուն, սակայն մշտապէս այնտեղ կը բացակայի դէպքերու իրական նկարագրութիւնը, քանի որ ան կը ցաւակցի, «ինչ-որ» հայերու մահերը, բայց ոչ թէ պետականօրէն ծրարուած եւ իրականացուած ցեղասպանութեան հետեւանքով զոհուածներու: Բացի այդ, Էրտողանը կը հաւասարեցնէ ցեղասպանութեան զոհերուն եւ անոնց կոտորած թուրքերու մահերը եւ իր խօսքին մէջ կը շեշտէ, որ կը ցաւակցի թէ անոնց, թէ անոնց:

Միւս կողմէ, Թուրքիոյ նախագահականի խօսնակ եւ գլխաւոր խորհրդական Իպրահիմ Քալընը ցեղասպանութեան վերաբերեալ յայտարարութիւն ըրած է, կրկին անգամ ներկայացնելով Անքարայի ժխտողական թէզերը, կը տեղեկացնէ ermenihaber-ը

«Առաջին Համաշխարհային պատերազմի կործանարար ու վնասարար պայմաններուն, 1915-ի Ապրիլ 24-ի տեղահանութեան ու վերաբնակեցման որոշումը «հաւատարիմ ժողովուրդ» անուանուող հայ ժողովուրդի ոչնչացման միտուած քաղաքականութեան արդիւնք չէր», - ըսած է Քալընը:

Ըստ թուրք պաշտօնեային՝ ցեղասպանութեան թեման կը «լուպիւհանայ», եւ որոշ հակաթրքական քաղաքական շրջանակներ իբր միտումնաւոր «կը նենգափոխեն պատմական փաստերը», նպատակ ունենալով թշնամութիւն սերմանել:

«Թուրքիոյ Հանրապետութիւնը եւ ժողովուրդը իր բոլոր շերտերով հանդերձ, երբեք տուրք

պիտի չտայ այս շահարկման սուտի ու զրպարտութեան արշաւին», - ըսած է Քալընը:

Ան, շարունակելով թրքական թէզերու շարադրումը, կրկին խօսած է Էրտողանի առաջարկած պատմաբաններու համատեղ յանձնաժողով ստեղծելու մասին: Այնուհետեւ խօսելով 2009-ի հայ-թրքական արձանագրութիւններու մասին, զանոնք անուանած է Արցախի հարցի լուծման, քաղաքական ու տնտեսական կարգաւորման եւ Հարաւային Կովկասի խաղաղութեան ու կայունութեան համար կատարուած քայլ, զրպարտելով Հայաստանը այդ «քայլը» անպարտաւորելով:



Թուրքիոյ նախագահականի խօսնակ Իպրահիմ Քալըն

տասխան թողնելու համար:

Քալընը նաեւ խօսած է 2014-ին սկսած, Էրտողանի կողմէ Պոլսոյ հայոց պատրիարքարանին շրջող «ցաւակցական ուղերձի» մասին, զայն անուանելով Անատոլիոյ մարդոց «համատեղ ցաւերը» մեղմելու համար պարզուած ձեռք, որ իբր թէ անտեսուած է «շահարկում ընող լուպիւհաստական ուժերու» կողմէ:

Քալըն չէ մոռցած հերթականութեամբ շարադրել նաեւ այս ընթացքին Թուրքիոյ գինանոցը կուտակուած միւս բոլոր տիրահաշակ թէզերը, որոնք կը վերաբերին այդ տարիներուն մահացած իսլամներու ընդհանուր ցաւին, թրքական իբրեւ թէ բաց արխիվներուն, Հայոց ցեղասպանութիւնը ընդունող 3-րդ երկիրներու անցեալի ենթադրեալ մուծ էջերուն եւ այլն:

# Անիի Աւերակներուն Դիմաց Բարձրացաւ Ամենամեծ Հայաստանի Եռագոյն Դրօշը



Ցեղասպանութեան զոհերու յիշատակի օրը, Մեծ Եղեռնէն 105 տարի անց՝ ի նշան յիշատակի ու պահանջատիրութեան, հայ-թրքական սահմանին՝ պատմական Անի մայրաքաղաքի դիմաց, Շիրակի մարզի հեռաւոր Նորշէն բնակավայրի մօտ 21 մեթր բարձրութեան վրայ վեր խոյացած է 10 մեթր երկարութիւն եւ 5 մեթր բարձրութիւն ունեցող Հայաստանի Եռագոյն դրօշը, բացուած է նաեւ խաչքար:

Խորհրդանշական արարողութեան մասնակցած են Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսեան, Գիւմրիի քաղաքապետ Սամուէլ Բալասանեան, պաշտօնատար այլ անձեր, հիւրեր: Դրօշը սահմանի

միւս կողմէն շատ յստակ կ'երեւի: «Անշուշտ, շատ յուզիչ ու խորհրդանշական էր: Դրօշը վեր է խոյացել անմիջապէս Անի մայրաքաղաքի դիմաց ու խորհրդանշական՝ Ապրիլի 24-ին, որն իր մէջ ամփոփում է կարեւոր մի միտք՝ եղե՛լ ենք, կան՛ք ու կը լինենք: Իսկ սահմաններն ու սահմանային բնակավայրերը պէտք է Հայի շնչով լցուեն եւ առաւել ամուր լինեն», իր խօսքին մէջ նշած է Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսեան:

Նախաձեռնութիւնը կարելի եղած է իրագործել ռուսաստանաբնակ Ասլանեան, Խոանեան եւ Գրիգորեան ընտանիքներու աջակցութեան շնորհիւ:

# Թուրքիոյ Մարդու Իրաւունքներու Միութիւնը Կոչ Ըրած է Գանաչել Հայոց Ցեղասպանութիւնը եւ Փոխհատուցում Տալ

Թուրքիոյ մարդու իրաւունքներու միութիւնը (IHD) Հայոց ցեղասպանութեան 105-րդ տարելիցին, Թուրքիոյ իշխանութիւններուն ուղղուած կոչով մը հանդէս եկած է:

Կոչին մէջ նշուած է. «Մեր պահանջը նոյնն է, ճանաչէ, ներո-

ղութիւն խնդրէ եւ փոխհատուցէ: Ապրիլ 24-ը հայերուն, ասորիներուն եւ յոյներուն դէմ կատարուած ցեղասպանութեան խորհրդանշական օրն է: 1915-ի Ապրիլ 24-ին Սթանպուլի տուներէն հանեցին եւ մահուան ուղարկեցին յայտնի հայերը»:

**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the

## 2020 AEBU Scholarship Program

Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

**APPLY NOW**  
Through June 30, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

# Ապրիլ 24-ի Առթիւ ԶԿԲՄ Արիւնարչաւ Կազմակերպեց Փասատիւնայի Իր Կեդրոնէն Ներս



Ապրիլ 24-ի հրապարակային միջոցառումներու բացակայութեան, այս տարի Լոս Անձելըսի Հայ Համայնքը այլընտրանքային նախաձեռնութիւններով է որ կը նշէ Հայկական Յեղասպանութեան 105-ամեակը եւ վառ կը պահէ

շատ օգտակար ծրագիր կազմակերպուեցաւ ՀԿԲՄ-ի Փասատիւնայի կեդրոնէն ներս: Համագործակցութեամբ Ամերիկայի Կարմիր Խաչի Կազմակերպութեան Ուրբաթ, Ապրիլ 24-ին տեղի ունեցաւ արիւ-

կարմիր Խաչի նախապէս նշանակուած արիւնարչաւի ծրագիրները ջնջուած էին: Վերջին շրջանին Կազմակերպութիւնը հանդէս կու գար կոչերով, որպէսզի ժողովուրդը արիւն նուիրաբերէ՝ պակաս չչառաջանալու համար:

դամ Դոկտ. Ռոզիկ Տէր-Դաւիթեան: ՀԿԲՄ շնորհակալութիւն կը յայտնէ Ամերիկեան Կարմիր Խաչին, որ անխոնջ կերպով կը շարունակէ իր մարդասիրական առաքելութիւնը, անոնց մէջ ամենէն կա-



յիշատակը 1.5 միլիոն Հայ նահատակներուն, որոնք զոհ դարձան թր քական կառավարութեան բնաջնջումի քաղաքականութեան: Հայ համայնքի անդամներու առատաձեռն նուիրատուութիւններուն շնորհիւ կարելի եղաւ կրկնապատել 1.5 միլիոն Ամերիկացիներու ճաշ բաժնելու՝ «Մենք Շնորհակալ ենք Ամերիկային» ծրագիրը: Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը (ՀԿԲՄ) եւս մասնակցեցաւ այս արշաւին: Մէկ այլ խորհրդանշական եւ


նարչաւ: Կեանք փրկելու այս ծրագրի իրականացումով ՀԿԲՄ կու գար պատուելու մեր նահատակներու յիշատակը: Միաժամանակ երախտագիտութիւն յայտնելու Ամերիկացի ժողովուրդին եւ մասնաւորապէս Կարմիր Խաչին, որ 1915 թուականէն առաջ եւ ետք, օգնութեան ձեռք երկարեց Օսմանեան Կայսրութեան տարածքին բարբարոսութիւններու ենթարկուող հայութեան եւ ապա վերապրողներուն: Վերջին ամիսներուն եւ յատկապէս համաճարակի պատճառաւ

ՀԿԲՄ ընդառաջեց այս կոչին՝ Ապրիլ 24-ի առթիւ կազմակերպելով արիւնարչաւ: Հայ համայնքի անդամները անմիջապէս սկսան արձանագրուիլ կայքէջի միջոցաւ եւ մէկ շաբթուայ մէջ բոլոր տեղերը ամբողջացան: «Արեան նուիրատուութիւնը մարդասիրական կարեւոր քայլ է: Այս արիւնարչաւով մենք մահուան դէմ կը պայքարինք կեանք տալով, խաւարի դէմ՝ լոյս, յուսահատութեան դէմ՝ յոյս», - ըսաւ ՀԿԲՄ-ի արունարչաւի յանձնարարման

րեւորը կը հանդիսանայ արիւնարչաւը՝ փրկելով միլիոնաւոր մարդոց կեանքը: Իւրաքանչիւր արեան միւսոր կը փրկէ երեք անձերու կեանքը: Այս արշաւով ՀԿԲՄ ապահովեց 33 միւսոր: «Այս թիւը մեր ակնկալութեանէն բարձր է եւ մենք շատ գոհ ենք այս արդիւնքէն», ըսաւ Խոնուարտ Քիմ, ներկայացուցիչ Ամերիկեան Կարմիր Խաչին: Եւ ապա շնորհակալութիւն յայտնեց ՀԿԲՄ-ին նախացերներու համար այս արիւնարչաւը:

## Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան Զայկական Բաժանմունքը Կը Մեկնարկէ ԽՕՍՔ ԱՌ Մրցանակը

ԽՕՍՔ ԱՌ մրցանակը աշխարհասփիւռ հայախօսներուն առիթով կ'ընծայէ հայերէնով արձարձելու այն հիմնահարցերը, որոնց դէմ յանդիման կը գտնուի մարդկութիւնը այսօր: Պատկաձեւ ժահրը կը ստիպէ որ միլիոնաւոր հայեր մեկուսանան: Այս պայմաններուն, համացանցը եւ տարբեր ընկերային առցանց հարթակներ հաղորդակցութեան ազդեցիկ միջոցներ դարձած են: Շատեր կը դիմեն այս ձեւերուն՝ ստեղծելով արտայայտչական նոր մշակույթ մը: Այս շրջադիւն մէջ, Հայկական Բաժանմունքը կը յայտարարէ յատենտողական եւ գրական արտադրութեան մրցանակ մը՝ ԽՕՍՔ ԱՌ, հրաւիրելով բոլորը ստեղծելու նիւթեր, որոնք կ'անդրադառնան աշխարհին վերաբերող հիմնահարցերու, ինչպէս նաեւ կը միտին հասարակութիւնը իրազեկելու եւ քաջալերելու որ այս նիւթերուն մասին արտայայտուին



ու լուծումներու շուրջ մտածեն: Հայկական Բաժանմունքի տնօրէն, Ռազմիկ Փանոսեանի խօսքերով. «Հարկաւոր է խօսիլ մարդկութեան վերաբերող ժամանակա-

կից հիմնահարցերու մասին, որոնք անյայտադ կ'անդրադառնան նաեւ աշխարհասփիւռ հայուն վրայ. օրինակ՝ կենսոլորտի աղէտը, գաղթականներու ճգնաժամը, յարատեւ պատերազմները, համայնքային մարտահրաւէրները եւ այլն: Այս մրցանակով կը հետապնդենք երկու նպատակ. նախ՝ քաջալերել որ իբր համայնք խօսուի մարդկութեան դիմակայած դժուարութիւններուն մասին, ապա խթանել որ այս քննարկումները տեղի ունենան հայերէնով, եւ զանազան առկայ միջոցներով: Եթէ կ'ուզէք աշխարհին դիմել հայերէնով, անդրադառնալու

հիմնահարցի մը, ապա ասիկա լաւագոյն առիթն է. կը հրաւիրենք ձեզ ներկայացնելու լսողական, տեսողական, գրաւոր, կամ գծանկարչական նիւթեր: Մրցանակաուները պիտի ստանան 500 տոլար արժողութեամբ պարգեւ մը: Պիտի յատկացուի ընդհանուր 50 մրցանակ: Դիմումները եւ հարցումները պէտք է ուղղուին՝ ArmCurrentIssuesPrize@gulbenkian.pt հասցէին, մինչեւ 8 յունիս 2020: Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել՝ <https://gulbenkian.pt/armenian-communities/> կայքէջը:

### ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՍԱՐ)

## ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

# Massis Weekly

Volume 40, No. 16

Saturday, MAY 02, 2020

## Armenia Commemorates 105th Anniversary of the Genocide



YEREVAN — Armenia's leaders laid flowers at the Tsitsernakabert memorial in Yerevan on Friday during official commemorations of the 105th anniversary of the Armenian genocide in Ottoman Turkey which were scaled back due to the coronavirus pandemic.

President Armen Sarkissian, Prime Minister Nikol Pashinyan, parliament speaker Ararat Mirzoyan and Catholicos of All Armenians Karekin II, visited the hilltop memorial separately, observing social distancing rules aimed at stopping the spread of the

virus in the country.

Catholicos Karekin II and several other senior clergymen prayed by its eternal fire for some 1.5 million Armenians who were massacred or starved to death by the Ottoman Turks during the First World War.

For the first time ever, ordinary Armenians were not allowed to walk to Tsitsernakabert because of a coronavirus-related nationwide lockdown imposed by the Armenian

Continued on page 4

## AEBU's Life-Saving Event on the 105th Anniversary of the Armenian Genocide



PASADENA — In the absence of the traditional commemorative gatherings that were held to observe the Armenian Genocide worldwide, this year, the Armenian community in Los Angeles partook in other meaningful undertakings to honor the memory of the 1.5 million Armenians who perished during the 1915 genocide perpetrated by the Turkish government. The generous contribution of the community at large have secured more than double the 1.5 million meals that it initially targeted as part of the "America We Thank You" initiative in support of the "Feeding America" program. The Armenian Educational Benevolent Union (AEBU) and its members ac-

tively participated in this program.

One of the other few symbolic and meaningful events that took place on April 24, was the blood drive hosted by the Armenian Educational Benevolent Union, in partnership with the American Red Cross at the AEBU Center in Pasadena. This life-saving event was our organization's way to honor the memory of our martyrs. At the same time, it was an opportunity to give back to the community at large and the Red Cross in specific, for its role in helping the survivors of the atrocities committed by the Ottoman government, even in the years preced-

Continued on page 4

## S.D.H.P. Statement on 105th Anniversary of Armenian Genocide

We commemorate the 105th Anniversary of the Armenian Genocide amid the devastating pandemic facing mankind and despite the fact that the commemorative gatherings and marches have been replaced by online and symbolic events, we are determined as ever in our pursuit toward truth and justice.



On the other hand, the Turkish government continues to maintain its denialist policy and refuses to come face to face with the dark chapters of its recent past. However, much to the chagrin of Turkey's leadership, our efforts toward international recognition of the Armenian Genocide continue to succeed, particularly last year, when the United States Senate and the House of Representatives affirmed their recognition of the Genocide by adopting twin resolutions despite Turkey's blatant threats and pressure tactics.

On this occasion, we once again extend our appreciation and gratitude toward the members of the U.S. Congress and the Turkish intellectuals who continue to pursue the truth. We also urge the Turkish government to finally recognize the Armenian Genocide as a historical fact and thereby open the door of frank dialogue between Armenia and Turkey.

Within the worldwide fight against the pandemic, we have witnessed the sense of unity and the humanitarianism of the Armenian people across the globe, demonstrated by the numerous acts of charity and benevolence toward families and individuals who have been impoverished by the pandemic. We are confident that with the combined efforts of Armenia and the Diaspora, we will overcome this difficult period and with renewed spirit and vigor, we will continue to raise our voices in the name of justice and the restoration of the rights of the Armenian people.

We remember and we demand.

S.D.H.P. Central Committee  
April 24, 2020

## Statement by President Donald Trump on Armenian "Remembrance Day"

WASHINGTON, DC — US President Donald Trump has issued his annual statement on the 105th anniversary of the Armenian Genocide, once again refraining from using the word Genocide calling it "Meds Yeghern", its Armenian term.

Following is the President's full statement:

Today, we join the global community in memorializing the lives lost during the "Meds Yeghern", one of the worst mass atrocities of the 20th century. Beginning in 1915, 1 and a half million Armenians were deported, massacred, or marched to their deaths in the final years of the Ottoman Empire. On this day of remembrance, we pay respect to those who suffered and lost their lives, while also renewing our commitment to fostering a more humane and peaceful world.

Every year on April 24, we reflect on the strong and enduring ties between the American and Armenian peoples. We are proud of the founders of the American Committee for Armenian and Syrian Relief, a ground-breaking effort established in 1915 that provided crucial humanitarian support to Armenian refugees, and grateful for the thousands of Americans who contributed or volunteered to help Armenians expelled from their homes.



On this day, we bear witness to the strength and resiliency of the Armenian people in the face of tragedy. We are fortunate that so many Armenians have brought their rich culture to our shores and contributed so much to our country, including decorated soldiers, celebrated entertainers, renowned architects, and successful businesspeople.

We welcome efforts by the Armenians and Turks to acknowledge and reckon with their painful history. On this day, we believe it is our obligation to remember those who suffered and perished and reaffirm our commitment to protecting vulnerable religious and ethnic minorities around the world.



## President Macron “France is More than Ever Committed to Defend the Memory of Armenian Genocide Victims”

PARIS — French President Emmanuel Macron pledged to counter attempts to deny the 1915 Armenian genocide in Ottoman Turkey as his government joined France’s Armenian community in commemorating its 105th anniversary on Friday.

In a letter addressed to Armenian President Armen Sarkissian Macron said.

“On this April 24, France remembers the assassination in Constantinople of 600 Armenian intellectuals, which marked the beginning of the genocide.

“France is today more than ever committed to defending the memory of the victims, combating denial of the genocide and carrying the universal lessons of this page of tragic history,” he wrote.

“In accordance with commitments made by me, my country last year declared April 24 the day of commemoration of the Armenian genocide. While ensuring strict compliance with the restrictions imposed by the current health situation, I decided that this day will be marked again this year by a restricted ceremony in Paris in the presence of representatives of the



French government.”

France formally recognized the Armenian genocide with a special law enacted in 2001. In 2018, Macron decided to assign an official day of commemoration for the Armenians massacred by the Ottoman Turks during the First World War.

In his letter to Sarkissian, Macron also mentioned the coronavirus pandemic, saying that it poses a new grave challenge to the world. “We will confront these challenges together, and I know that France and Armenia will work together in international forums in favor of more effective multilateralism and new forms of solidarity,” he said.

“Whatever the ordeals, Armenians can count on the friendship of France,” concluded the French leader.


## Former Vice President Joe Biden Pledges Unequivocal Support for Affirmation of the Armenian Genocide

Following is official statement of Democratic presidential candidate, former vice-president Joe Biden:

Today we remember the atrocities faced by the Armenian people in the Metz Yeghern — the Armenian Genocide. From 1915 to 1923, almost 2 million Armenians were deported en masse, and 1.5 million men, women, and children were killed. Greeks, Assyrians, Chaldeans, Syrians, Arameans, Maronites, and other Christians were also targeted. We must never forget or remain silent about this horrific and systematic campaign of extermination. And we will forever respect the perseverance of the Armenian people in the wake of such tragedy.

It is particularly important to speak these words and commemorate this history at a moment when we are reminded daily of the power of truth, and of our shared responsibility to stand against hate — because silence is complicity. If we do not fully acknowledge, commemorate, and teach our children about genocide, the words “never again” lose their meaning. The facts must be as clear and as powerful for future generations as for those whose memories are seared by tragedy. Failing to remember or acknowledge the fact of a genocide only paves the way for future mass atrocities.

During my years in the Senate, I



was proud to lead efforts to recognize the genocide against the Armenian people. Last year, I was pleased to endorse bipartisan legislation in the House and Senate that officially recognized and established an ongoing U.S. commemoration of the Armenian Genocide. If elected, I pledge to support a resolution recognizing the Armenian Genocide and will make universal human rights a top priority for my administration.

I stand today with all Armenians and the Armenian-American community, which has contributed so much to our nation, in remembering and honoring the victims of the Armenian Genocide.

**Vice President Joe Biden**

## IMF Plans \$280 Million in Emergency Funding for Armenia

YEREVAN -- The International Monetary Fund will likely disburse next month \$280 million in emergency loans designed to help Armenia fight the coronavirus outbreak and mitigate its economic consequences, a senior IMF official said over the weekend.

Yulia Ustyugova, the fund’s resident representative in Yerevan, told RFE/RL’s Armenian service that the IMF is also planning \$140 million in additional funding to Armenia.

The Armenian government announced last week plans to borrow around \$540 million for cushioning the impact of an unfolding economic recession in the country. Finance Minister Atom Janjughazyan said the government needs to offset a major shortfall in its tax revenues and to continue financing coronavirus relief measures.

Ustyugova said that IMF officials have recommended the \$280 million disbursement to the fund’s executive board, which should approve it in the second half of May. She said the sum includes a \$248 million “stand-by arrangement” which was allocated to Armenia in May 2019 and has not been used by the latter until now.

“Also, the [Armenian] authorities have requested additional financial help from the IMF to help pay for the economic support program and necessary healthcare expenditures in the current environment,” said Ustyugova.

“So \$280 million will be available in the second half of May. The program itself will last until May 2022, and about \$140 million will additionally be available after May 2020,” added the IMF official.

She insisted that the emergency borrowing is justified even though it will lead to a sizable increase in Armenia’s foreign debt. “The measures that need to be taken right now will help to avoid more painful and prolonged socioeconomic damage in the future,” she said.

The Armenian government has promised a wide range of coronavirus-



related compensatory measures, including cash payments to a large part of the population, financial assistance to businesses and loan subsidies for farmers. According to Janjughazyan, it plans to spend \$150 billion drams (\$315 million) for this purpose this year.

Ustyugova praised the government’s “swift” response to the economic fallout from the global health crisis. “We welcome the package of economic policy measures that was announced by the authorities,” she said.

